ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՈՒՂԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՈՒՂԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

0615 գ.Նոր Ուղի
հեռ. (0-234) 6-11-82
norughi@mail.ru

Индекс: 0615 : с. Нор Уги
Тел : (0234) 6-11-82

03.12.2013թ *Որոշում թիվ – 21-Ն*

ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին

Որոշում է՝

Նոր ուղի համայնքում 2014թ համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1.Հիմնական օբյեկտների համար՝

1)Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական(ամառանոցային),տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500դրամ

2)սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000դրամ

բ/ 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ

գ/1001 և ավելի 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ:

դ/3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ

4) 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտներիվերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման,աշխատանքների համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

Չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար 1500դրամ

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար տեղական տուրքը սահմանվում է 2500դրամ

1-ին,2-րդ,3-րդ կետերի համար կիրառվում է 0.5 գործակիցը:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել

1)ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ

5)Համայնքի վարչական տարածքում՝

1)Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար,սահամանել տեղական տուրք,յուրաքանչյուր օրվա քմ համար 100 դրամ:

2)Խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000դրամ

7.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություններ իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 10000դրամ

8.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000դրամ

9. Համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000դրամ

10.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝մասնակիցներից վճար 2000դրամ

11.ա/Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքները իրականացնելու համար տեղական վճար սահմանել ,յուրաքանչյուր բնակչից ամսվա համար 120 դրամ:

բ/Համայնքի վարչական տարածքում գործող խանութների համար ամսական տեղական վճար սահմանել 400 դրամ:

Հաստատեցին ավագանու անդամներ

Հ. Թադևոսյան - կողմ

Շ. Սիմոնյան - կողմ

Հ. Օհանջանյան - կողմ

Հ. Սողոմոնյան - կողմ

Նոր ուղի համայնքի ղեկավար՝ Վ.Վարդանյան